«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

"YEREVAN STATE MEDICAL UNIVERSITY
AFTER MKHITAR HERATSI" FOUNDATION

ՀՀ, 0025, Երևան, Կորյունի փ. 2 ▪ Koryun St. 2, Yerevan, 0025, Republic of Armenia ▪ Tel: +374 10 582532 ▪ URL: www.ysmu.am ▪ E-mail: genserv@ysmu.am

թիվ 09/9

«09» 01 2026թ.

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ

Որոշում

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ «Օրենք») 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ԷԱՃԱՊՁԲ-2026/11-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում 8-րդ չափաբաժնի մասով նվազագույն գին էր առաջարկել «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ն, և գնահատող հանձնաժողովի կողմից «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ի ներկայացված հայտում արձանագրվել էր անհամապատասխանություն հրավերի պահանջներին մասնավորապես. համակարգի միջոցով ներկայացված դիմում-հայտարարությունը /հավելված 1/ հաստատված չէր էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ներկայացված չէր իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը /հավելված 1.3/, թիվ 8-րդ չափաբաժինի մասով համակարգի միջոցով ներկայացված չէր ապրանքի ամբողջական նկարագիրը: Ուստի առաջնորդվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ՝ «Կարգ») 41-րդ կետով և «ԷԱՃԱՊՁԲ-2026/11-1-ԵՊԲՀ» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի 8.11 կետով՝ մասնակցին առաջարկվել էր ծանուցման պահից 1 (մեկ) աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը: Սահմանված ժամկետում մասնակցի կողմից շտկում չկատարելու հիքով հայտը գնահատվել էր անբավարար և մերժվել: Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն մասնակցի կողմից սահմանված ժամկետում հայտի գնահատման արդյունքում արձանագրված

0027

անհամապատասխանությունները չշտկելը կամ ամբողջական չշտկելը հանդիսանում է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում: Այսպիսով, ընթացակարգի հրավերով հայտի ապահովում վճարելու պարտավորություն նախատեսված չի եղել և «Հիպոկրատ Դենտ» ՍՊԸ-ն թույլ է տվել գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, ինչը հիմք է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) համաձայն վերջինիս գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Սույն ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունները հրապարակված են gnumner.am և միարժամանակ կցված են eauction.armeps.am հարթակներում:

Հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված փաստերը՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Գնման ընթացակարգի				Մասնակցի				Պատվիրատուի անվանումը	Իրավական հիմք	Այլ անհրաժեշտ տեղեկատվություն
ծածկագիրը	չափաբաժնի համարը	չափաբաժնի անվանումը	գնման գինը /ՀՀ դրամ/	Անվանումը	ՀՎՀՀ	գործունեության հասցեն	գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11
«ԷԱՃԱՊՁԲ-2026/11-1-ԵՊԲՀ»	8	Հատակի մաքրման նյութ	1.416.000	«Հիպոկրատ դենտ» ՍՊԸ	03584501	ՀՀ, Կոտայքի մարզ, Ձորաղբյուր 2224 Ջրվեժ Այգետարածք 4/115	30.12.2025	«Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ	«ԷԱՃԱՊՁԲ-2026/11-1-ԵՊԲՀ» ծածկագրով հրավերի 8.11 կետ և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 32-րդ կետի 19-րդ կետ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետ	Առկա չէ

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից

«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆ